

Արդ ո՞ւր են այս ամենայն յոյս, ո՞ւր է այս ամենայն ակնկալութիւն, որոյ սակի հաշեալ մաշէաք ցարդ եւս վասն խափանելոյ բառնալոյ այսց ամենից եւ կամայ յակամայ տեւեցաք առ ի չտեսանել զոր յուսացաք, եւ միայն ակն եւ կիւման ի Տարէն Ոսկւոյ (Սկիւտար) մինչ ի կարին նկատէի եւ անտի մինչ յԱրարատ դիւ տէի զօրհանապազ . խոցագեղ սրտիս՝ զմատ մի թղթիդ ի դրունս պանտոկաց դեգերէաք, միայն յիջեւանս վաճառականաց տառապէաք, միայն զանցաւորօք ճանապարհաց շրջէաք՝ սպասելով լսել զհամբաւ ողջուունիդ: Այլ այսօր թուղթ մի բերին սեւով լցեալ, յանկարծ մահուն զսիրտ մեր սեւով լցաւ՝ թէ Առէ՛ք կարդացէք, ծնօղք իմ, ու տեսէք որ չեմ գալու: Վա՛յ լսելեաց մերոց ընդ գոյժս, եղո՞ւկ տեսանելեացս անտեսանելի ճղակտարութեանդ, որդեա՛կ իմ Ոհան: Փոխանակ վերասացելոցս յուսոյ ամենայնի ընդդիմակն քեզ հանդիպեցաւ: Միթէ պատանօք պատեցա՞ւ անձն քո վայելչահասակ. միթէ ի դագաղ մահու բարձա՞ւ կիպարաբաղդատ քո տի. միթէ փշրեցա՞ն աղեղնանման եւ կամարայար ունեք քո. միթէ հողով կափուցա՞ւ այդ ծով ծով աչեր քո. միթէ փակեցա՞ւ ճոխուութիւնք ազվոր բերանոյ քո. միթէ լոեցա՞ն քաղցրանուազ բարբառ քո. միթէ անզարգացա՞ւ քաղցրատեսիլ կերպարան քո. միթէ խցա՞ւ անուշասփիւռ ձայն եղանակի քո. միթէ հարա՞ւ ի կարկտէ ծաղկեալ նռնենիդ. միթէ ի հո՞ղ գրաւեցին զանձն սիգաճեմ զոր յուսայի ի դէպ ժամանակի տեսանել. վա՛յ տեսանելեացս, միթէ ընդ երկրաւ գերեզմանի՞ ամփոփեցաւ տիպգ վարդեհոտ: Արդ՝ որո՞վ շիջանիցի հուր սրտիս եւ որո՞վ զիջանի բոց ծաւալման անտանելի մորմոքմանս: Զի թէ անիծեալ էաք յԱստուծոյ ըստ Գրոյն՝ գոնէ հանդէպ աչաց մերոց պատահէր մահ քո, ո՞վ որդեակ մանկամեռ: Մարթ էր զի կռնծելոյ ձեւ